ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2 ԱՊՐԻԼԻ 2017Թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

www.elections.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2 ԱՊՐԻԼԻ 2017Թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

www.elections.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դիմումների և բողոքների ստացման, գրանցման, քննարկման ընթացակարգը համառոտ 4

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ 6

Վարչական վարույթի հարուցման հիմքերը..... 6

Դիմում կամ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները..... 6

Դիմում (բողոք) քննող իրավասու մարմինը 7

Ընտրական հանձնաժողովներ դիմումներ և բողոքներ ներկայացնելու ժամկետները..... 8

Որոշումների ընդունման ժամկետները..... 10

Դիմումների և բողոքների ստացման, գրանցման, քննարկման ընթացակարգերը..... 11

Դիմումի (բողոքի) քննարկման մասին ծանուցումը..... 14

Դիմումատուի (բողոք ներկայացնողի) իրավունքները 16

Վարչական վարույթի հարուցումը մերժելը, դիմումն առանց քննարկման վերադարձնելը 16

Հանձնաժողովների ընդունած վարչական ակտի ուժի մեջ մտնելը..... 17

ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ..... 18

Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի և կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումներ..... 18

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումներ..... 19

Քվեարկության արդյունքների վերահաշվարկը..... 20

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում ներկայացնելու կարգը 22

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 26

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ 28

Դիմումների և բողոքների ստացման, գրանցման, քննարկման ընթացակարգը համառոտ

Դիմում /բողոք

Դիմողը դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը: Դիմումը պետք է ստորագրված լինի դիմողի կողմից, ներառի դիմողի անունը, ազգանունը, փոստային հասցեն, տրման ամսաթիվը, հստակ սահմանի ներկայացվող պահանջը, պարունակի հիմնավորումներ:

Մուտքագրում ԿԸՀ կամ Տարածքային ԸՀ գրանցամատյանում

Ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումները կամ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը: Ձևական սխալները շտկում է հանձնաժողովը կամ դիմողը: Կից փաստաթղթերի ցանկը համալրելու համար տրվում է ողջամիտ ժամկետ:

Նախագահը հասցեագրում է հանձնաժողովի անդամին

Հանձնաժողովի մյուս անդամները ստանում են դիմումի պատճենը: Եթե հանձնաժողովի որևէ անդամ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման նախագիծ չի ներկայացնում, ապա վարչական վարույթը համարվում է հարուցված:

Որոշման նախագիծ

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի դիմումի վերաբերյալ որոշման նախագիծ ներկայացնելու՝ հարցը հանձնաժողովի նիստում քննելու համար:

Հանձնաժողովի նիստ

Դիմումատուն ծանուցվում է դիմումի քննարկման օրվա և ժամի մասին: Դիմումը քննարկվում է Հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովի նիստը համառոտ արձանագրվում է:

Վարչական ակտ

Դիմումի քննարկման արդյունքում կայացվում է որոշում: Վարչական վարույթի հարուցումը մերժելու դեպքում կայացվում է որոշում, որում նշվում են մերժման պատճառները և հիմքերը:

Հրապարակում

Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից: Վարչական ակտն ընդունվելուց հետո ուղարկվում է վարչական վարույթի մասնակիցներին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթն իրականացվում է **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, **Ընտրական օրենսգրքով** սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:

1 Վարչական վարույթի հարուցման հիմքերը

Վարչական վարույթի հարուցման հիմքերն են՝

- անձի դիմումը կամ բողոքը,
- վարչական մարմնի նախաձեռնությունը:

2 Դիմում կամ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները

Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող է բողոքարկել՝

- ✓ **յուրաքանչյուր ոք**, եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը,
- ✓ **վստահված անձը**, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի՝Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները,
- ✓ **դիտորդը կամ այցելուն**, եթե գտնում է, որ խախտվել են իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները,
- ✓ **զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը**, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը,
- ✓ **ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը,** եթե գտնում է, որ խախտվել է՝ իր կամ իր

վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը:

3 Դիմում (բողոք) քննող իրավասու մարմինը

Տարածքային ընտրական հանձնաժողով կարող են բողոքարկվել՝

- տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը),
- ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով կարող են բողոքարկվել՝

- տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ ընտրությունների արդյունքներով տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների):

ՀՀ վարչական դատարան կարող են բողոքարկվել՝

- ընտրությունների արդյունքներով տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումները,
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների):

ՀՀ Սահմանադրական դատարան կարող են բողոքարկվել՝

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները:

4 Ընտրական հանձնաժողովներ դիմումներ և բողոքներ ներկայացնելու ժամկետները

Ընդհանուր ժամկետներ

Քվեարկության օրվան նախորդող օրերի ընթացքում՝

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել *տարածքային ընտրական հանձնաժողով՝* օրացուցային **2 օրվա ընթացքում** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին:

Բողոքները ***համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով*** կարող են ներկայացվել՝

- աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն,
- քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն:

Քվեարկության օրվա ընթացքում կամ քվեարկության օրվան հաջորդող օրերին՝

- **Տեղամասային ընտրական հանձնաժողովի** ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել ***համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝***
  - քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն,
  - քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն,
  - քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:
- **Տարածքային ընտրական հանձնաժողովի** ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել *Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝* օրացուցային **3 օրվա ընթացքում** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին:

Բողոքները **Կենտրոնական ընտրական հանձնաժողով** կարող են ներկայացվել.

- աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն,
- քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն,
- քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև 22.00-ն,
- քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև 18.00-ը:

Եթե օրացուցային 3-րդ օրը լրանում է ոչ աշխատանքային օրը, բացառությամբ քվեարկության նախորդ, քվեարկության կամ քվեարկության հաջորդ օրերի, ապա բողոքը կարող է ներկայացվել **հաջորդ աշխատանքային օրը**՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն:

Հատուկ ժամկետներ

- **Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում** կարող է ներկայացվել *միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով* **քվեարկության հաջորդ օրը**՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ **քվեարկությունից հետո երկրորդ օրը**՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:
- **Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում** կարող է ներկայացվել *միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով*՝ **քվեարկության հաջորդ օրը՝** ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝** ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:
- **Ընտրության արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմում** *ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով* (Տարածքային ԸՀ կամ ԿԸՀ) կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար **Ընտրական օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 2 օր առաջ՝** մինչև ժամը 18.00-ն:
- **Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումը** ներկայացնում է *համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով* **քվեարկության հաջորդ օրը՝** ժամը 12.00-ից մինչև **քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝** ժամը 11.00-ն**:**

Ուշադրություն՛

Եթե դիմում տալու համար Ընտրական օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, այն եթե մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:

Ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումները կամ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝նշելով պատճառը:

5 Որոշումների ընդունման ժամկետները

Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովները դիմումներին պատասխանում, իսկ Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են՝

- ընտրությունները նշանակվելուց հետո՝ մինչև քվեարկության նախորդ օրը ստացված դիմումներին, **5-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև քվեարկության սկիզբը,**
- քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, ստացված դիմումներին՝ **մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը,** իսկ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ տարածքային ընտրական հանձնաժողովը՝ **մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 1 օր առաջ**:

Ուշադրություն՛

Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակներում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում:

6 Դիմումների և բողոքների ստացման, գրանցման, քննարկման ընթացակարգերը

- Դիմումները և բողոքները հանձնաժողովում ստացվում և **մուտքագրվում են հանձնաժողովի համապատասխան գրանցամատյանում**, դրանց տրվում են մուտքի համարներ:

Դիմումը պետք է՝

- ստորագրված լինի դիմողի կամ բողոք բերողի կողմից,
- ներառի դիմողի (բողոք ներկայացնողի) անունը, ազգանունը, դիմողի հասցեն, տրման ամսաթիվը,
- հստակ սահմանի ներկայացվող պահանջը,
- պարունակի հիմնավորումներ: Հնարավոր բոլոր ապացույցները պետք է կցվեն դիմումին կամ բողոքին:

Դիմումը կարող է ներառել նաև դիմումատուի էլեկտրոնային կապի որևէ միջոցի տվյալները (հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն և այլն):

Ուշադրություն՛

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Թեկնածուի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, ընտրական հանձնաժողովի անդամի, լիազոր ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (սահմանված նմուշի վկայականի) պատճենը:

Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները, իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումները, ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները, ինչպես նաև առանց լիազորագրի (եթե դիմումը ներկայացնում է լիազորված անձը) ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները **որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին**:

Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա ընտրական հանձնաժողովը կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին, կամ դիմողին հնարավորություն է ընձեռում շտկելու այդ սխալները՝ սահմանելով ողջամիտ ժամկետ:

Եթե դիմումին կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա ընտրական հանձնաժողովը համալրման համար սահմանում է ողջամիտ ժամկետ: Նշված ժամկետում սխալները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Այդ դեպքում ընտրական հանձնաժողովն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ իրականացնելու վարչական վարույթ:

Ներկայացված ցանկացած դիմում կամ բողոք մուտքագրվում է ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Դիմումի կամ բողոքի թերությունները չեն կարող վկայակոչվել կամ հիմք հանդիսանալ դիմումը կամ բողոքը չմուտքագրելու համար:

- Հանձնաժողովի նախագահը դիմումը կամ բողոքը մուտքագրվելուց անմիջապես հետո **հասցեագրում է հանձնաժողովի անդամին**, իսկ **պատճենները տրամադրվում են հանձնաժողովի մնացած անդամներին**:

Հանձնաժողովի **յուրաքանչյուր անդամ իրավունք ունի դիմումի (բողոքի) վերաբերյալ որոշման նախագիծ ներկայացնելու՝** հարցը հանձնաժողովի նիստում քննարկելու համար:

Եթե հանձնաժողովի որևէ անդամ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման նախագիծ չի ներկայացնում, ապա **վարչական վարույթը համարվում է հարուցված**: Այդ դեպքում հանձնաժողովը իր նիստում պետք է **ըստ էության քննարկի դիմումը (բողոքը) և կայացնի որոշում**:

Վարչական վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովի կազմին կամ հանձնաժողովի անդամին վարույթի մասնակիցները **չեն կարող բացարկ հայտնել:**Վարչական վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովի անդամն **ինքնաբացարկ հայտնելու իրավունք չունի:**

- **Հանձնաժողովի նիստը համառոտ արձանագրվում է՝** անկախ վարույթի մասնակիցների ներկայությունից:

Վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին հանձնաժողովը կայացնում է որոշում, որում նշվում են մերժման պատճառներն ու հիմքերը:

Դիմումի (բողոքի) քննարկումը տեղի է ունենում հանձնաժողովի նիստում, որի արդյունքում **հանձնաժողովը կայացնում է որոշում**:

Տեղեկատվություն ստանալու մասին դիմումները հանձնաժողովի նիստում չեն քննարկվում: Դրանց պատասխանը ուղարկվում է հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ: Եթե պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթի օրինակը տեղադրված է հանձնաժողովի համացանցային կայքում, ապա այդ մասին տեղեկացվում է դիմողը, և նրան դրանցից պատճեններ կամ քաղվածքներ չեն տրամադրվում:

Ուշադրություն՛

Եթե մինչև դիմումի (բողոքի) քննարկումը կամ քննարկման ժամանակ, մինչև հանձնաժողովի կողմից որոշում ընդունելը, դիմողը (բողոք ներկայացնողը) գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից (բողոքից), բացառությամբ վերահաշվարկի դիմումների, հանձնաժողովը որոշում է կայացնում դիմումով (բողոքով) վարչական վարույթը կարճելու մասին:

Եթե ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկվել է և՛ վարչական, և՛ դատական կարգով, ապա վարչական վարույթը կարճվում է:

7 Դիմումի (բողոքի) քննարկման մասին ծանուցումը

- **Կենտրոնական ընտրական հանձնաժողովում դիմումի (բողոքի) քննարկման մասին** դիմումատուն ծանուցվում է դիմումի (բողոքի) քննարկման օրվա և ժամի մասին ***հանձնաժողովի համացանցային կայքում տեղեկություն տեղադրելու միջոցով***:

Եթե դիմումում (բողոքում) նշված է էլեկտրոնային կապի որևէ միջոց՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստային հասցե, ապա դիմումատուն (բողոք ներկայացնողը) ***տեղեկացվում է նաև այդ միջոցով***, ըստ հնարավորության՝ նաև կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

- **Տարածքային ընտրական հանձնաժողովում դիմումի (բողոքի) քննարկման մասին** դիմումատուն (բողոք ներկայացնողը) համարվում է ծանուցված դիմումի (բողոքի) քննարկման օրվա և ժամի մասին ***հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում տեղեկություն փակցնելու դեպքում***:

Եթե դիմումում (բողոքում) նշված է էլեկտրոնային կապի որևէ միջոց, ապա նրան ***միաժամանակ կապի այդ միջոցով*** *տեղեկացնելու դեպքում*,

ըստ հնարավորության՝ նաև կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

ԹԻՎ ___ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

ԴԻՄՈՒՄԻ (ԲՈՂՈՔԻ) ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

« __ » _____ 20__ թ.

Դիմումատու (բողոք ներկայացնող) _____

Քաղաքացի _____ - ի կողմից Թիվ ____ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված __ _____ 20__ թ. Թիվ ____ դիմումի (բողոքի) քննարկումը տեղի կունենա՝

20__թ. _____ի __ -ին ժամը՝ __ -ին Թիվ __ տարածքային ընտրական հանձնաժողովի նիստում՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք _____, փողոց _____, շենք __, հարկ __, սենյակ ___ հասցեով:

Թիվ __ տարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ _____

կ. տ.

8 Դիմումատուի (բողոք ներկայացնողի) իրավունքները

Դիմումատուն (բողոք ներկայացնողը) իրավունք ունի՝

- մասնակցելու հանձնաժողովի նիստում իր դիմումի (բողոքի) քննարկմանը,
- ներկայացնելու հիմնավորումներ,
- ելույթ ունենալու:

Դիմումատուն (բողոք ներկայացնողը) իրավունք չունի հայտնելու բացարկ հանձնաժողովի կազմին կամ հանձնաժողովի անդամին:

Ընտրությունների ժամանակահատվածում, աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով, վարչական վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերին ծանոթանում են վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովում՝ *այդ վարույթով հրավիրված նիստից առաջ*: **Ընտրությունների ժամանակահատվածում վարչական վարույթը չի կարող կասեցվել**:

9 Վարչական վարույթի հարուցումը մերժելը, դիմումն առանց քննարկման վերադարձնելը

Ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին, եթե՝

- դիմումը կամ բողոքը ներկայացվել է նման իրավունք չունեցող (ոչ իրավասու) անձի կողմից,
- դիմումը չի պարունակում դիմումատուի վերաբերյալ տվյալներ կամ ներառում է կեղծ տվյալներ,
- դիմումը ներկայացվել է իրավունքի չարաշահմամբ,
- ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումով չի ներկայացվել լիազորագիրը:

Ընտրական հանձնաժողովներում դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին, եթե՝

- դիմումը (բողոքը) ներկայացվել է ոչ իրավասու ընտրական հանձնաժողովին,
- դիմումը ներկայացվել է Ընտրական օրենսգրքով սահմանված վերջնաժամկետից ուշ:

Ուշադրությու՛ն

Եթե դիմում տալու համար Ընտրական օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:

10 Հանձնաժողովների ընդունած վարչական ակտի ուժի մեջ մտնելը

- **Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած** վարչական ակտն ուժի մեջ է մտնում **նիստում հրապարակելու պահից:** Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը տեղադրվում է հանձնաժողովի համացանցային կայքում՝ ընդունվելուց հետո մինչև հաջորդ օրվա ավարտը:
- **Տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած** վարչական ակտն ուժի մեջ է մտնում **նիստում հրապարակելու պահից**: Տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը փակցվում է տարածքային ընտրական հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում, ակտն ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

Ընտրական հանձնաժողովի վարչական ակտն ընդունելուց հետո՝ **3-օրյա ժամկետում,** ուղարկվում է վարչական վարույթի մասնակիցներին՝ առաքման անդորրագիրը կցելով գործին, եթե այդ ակտը վարույթի մասնակիցները հանձնաժողովում չեն ստացել:

Ուշադրությու՛ն

Եթե դիմումը ներկայացվել է մեկից ավելի դիմումատուների կողմից համատեղ, ապա ընդունված վարչական ակտն ուղարկվում է դիմումում առաջինը նշված դիմումատուին:

ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

1 Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի և կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումներ

Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու դիմում կարող է ներկայացնել՝

✓ միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը):

Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու դիմում կարող է ներկայացնել՝

✓ միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը):

Գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում **կարող է ներկայացվել** *միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով:* Դիմումը պետք է ներկայացվի **ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝** մինչև ժամը 18.00-ն:

Ընտրական հանձնաժողովը գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է ընդունում **դիմումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,** սակայն **ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը՝** մինչև ժամը 12-00-ն:

Գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշումը **կարող է բողոքարկվել** *վարչական դատարան* **3 օրացուցային օրվա ընթացքում** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն **ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը՝** մինչև ժամը 18.00-ն:

Վարչական դատարանը որոշում է կայացնում **5 օրվա ընթացքում**, բայց **ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը**:

2 Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումներ

- Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում **կարող են ներկայացնել՝**
  - ✓ ընտրություններին մասնակցող **կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)**,
  - ✓ ընտրություններին մասնակցող **կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն**,
  - ✓ **վստահված անձը**, միայն այն դեպքում, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին,
  - ✓ **համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը,** միայն այն դեպքում, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում **կարող է ներկայացվել** *միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝*

- քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն,
- քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմումի վերաբերյալ *տարածքային ընտրական հանձնաժողովը* որոշում է կայացնում՝

- մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը,
- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 1 օր առաջ:

▪ Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում **կարող են ներկայացնել՝**

✓ միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը):

3 Քվեարկության արդյունքների վերահաշվարկը

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում **կարող է ներկայացվել** *միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով* **քվեարկության հաջորդ օրը՝** ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝** ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում **կարող է ներկայացնել՝**

✓ **ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն,** եթե ներկա է եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը,

- ✓ **վստահված անձը**, եթե ներկա է եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը,
- ✓ **տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝** եթե ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում:

Ուշադրությու՛ն

Եթե միաժամանակ կայացել է մի քանի քվեարկություն, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը վերահաշվարկի դիմում կարող է ներկայացնել միայն այն քվեարկության արդյունքի վերաբերյալ, որի արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:

Միաժամանակ մեկից ավելի քվեարկություններ անցկացվելու դեպքում յուրաքանչյուր քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար ներկայացվում է առանձին դիմում:

Վերահաշվարկի դիմումը պետք է՝

- ստորագրված լինի դիմողի կողմից,
- ներառի դիմողի անունը, ազգանունը, փոստային հասցեն,
- այն ընտրական տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ,
- եթե միաժամանակ կայացել է մի քանի քվեարկություն, ապա պետք է նշվի այն քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ պահանջվում է վերահաշվարկ անցկացնել:

Դիմումին **կարող են կցվել** քվեարկության արդյունքների սխալ ամփոփման ապացույցներ:

Տարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկի դիմումները գրառում է գրանցամատյանում՝ նշելով ստացման ժամանակը:

Քվեարկության արդյունքների վերահաշվարկը կատարվում է ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված կարգով:

Դիմումատուի հրաժարվելը քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմումից **հիմք չէ վերահաշվարկ չիրականացնելու համար**:

Վերահաշվարկների դեպքում դիմումների մերժումը.

Տարածքային ընտրական հանձնաժողովը մերժում է ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումը և վերահաշվարկ չի իրականացնում, եթե պահանջվել է քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացում **ՀՀ ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի դրույթների խախտումով:**

4 Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում ներկայացնելու կարգը

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումը **ներկայացվում է** *համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով* **քվեարկության հաջորդ օրը** ժամը 12.00-ից **մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝** ժամը 11.00-ն**:**

Քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում **կարող է ներկայացնել՝**

- ✓ ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն,
- ✓ վստահված անձը,
- ✓ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը,
- ✓ քվեարկությանը չմասնակցած այն ընտրողը, որի տվյալների դիմաց, ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ:

Ուշադրություն՛ն

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումները պետք է ներկայացվեն առանձնացված՝ ըստ Հայաստանի Հանրապետությունից բացակայող և քվեարկությանը չմասնակցած և ըստ Հայաստանի Հանրապետությունում գտնվող և քվեարկությանը չմասնակցած անձանց:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումը ներկայացվում է **բնօրինակով՝ ստորագրված բացառապես դիմումատուի կողմից:**

Դիմումը պետք է պարունակի դիմողի՝

- անունը, հայրանունը, ազգանունը,
- հաշվառման վայրի հասցեն,
- բնակության վայրի հասցեն, եթե տարբերվում է հաշվառման վայրի հասցեից,
- հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն, կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,
- դիմումի տրման ամսաթիվը:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված սուբյեկտների ներկայացրած **դիմումներին կից պետք է ներկայացվի նաև** դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճենը:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին **դիմումին պետք է կցված լինի** որևէ անձի աներկբա **հայտարարությունն** այն մասին, որ ընտրողը քվեարկությանը չի մասնակցել, և այդ ընտրողի փոխարեն քվեարկել է այլ անձ: **Հայտարարություն տվողը պետք է նաև գրավոր հավաստի և ստորագրի**, որ տեղյակ է այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Հայտարարությունը պետք է պարունակի հայտարարություն տվողի՝

- անունը, հայրանունը, ազգանունը,
- անձը հաստատող փաստաթղթի համարը (անձնագրի դեպքում՝ սերիան և համարը),
- հաշվառման վայրի հասցեն,
- բնակության վայրի հասցեն, եթե տարբերվում է հաշվառման վայրի հասցեից,
- հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն,
- հայտարարության տրման ամսաթիվը:

Հայտարարության մեջ պետք է նաև նշված լինեն քվեարկությանը չմասնակցած ընտրողի՝

- անունը, հայրանունը, ազգանունը,
- ընտրական տեղամասի համարը, որ ցուցակի ընտրող է,
- ընտրողի համարը համապատասխան ցուցակում:

Հայտարարությունը ներկայացվում է **բնօրինակով՝ ստորագրված բացառապես հայտարարություն տրվող անձի կողմից**:

Ուշադրությու՛ն

Դիմում ներկայացնողը պետք է գրավոր հավաստի և ստորագրի, որ տեղյակ է այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիմումին կից կեղծ ստորագրությամբ հայտարարություն ներկայացնելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Հայտարարությունը համարվում է կեղծ ստորագրությամբ հայտարարություն, եթե այն ստորագրվել է ոչ այն անձի կողմից, որի անունից տրվում է հայտարարությունը, կամ ստորագրվել է մտացածին անձի անունից: Սույն պարբերությամբ սահմանված պահանջը չի տարածվում այն դեպքի վրա, երբ դիմումը ներկայացնողը և հայտարարություն տվողը նույն անձն են:

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումի, հայտարարության ձևերը, ինչպես նաև այլ անձի փոխարեն քվեարկելու մասին սուտ հայտարարություն տալու և այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դի-

մումին կից կեղծ ստորագրությամբ հայտարարություն ներկայացնելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին տեղեկացված լինելու **ձևաթղթերը ներբեռնվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:**

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումների **քննարկումը կատարվում է Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված կարգով:**

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- Ընտրական իրավունքի խախտման դեպքում հայցադիմումը ներկայացվում է ՀՀ *վարչական դատարան*՝ օրացուցային **3 օրվա ընթացքում** այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին:

- Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումը բողոքարկվում է *վարչական դատարան* **3 օրացուցային օրվա ընթացքում** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն **ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը**՝ մինչև ժամը 18.00-ն:

- Ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հայցադիմումները ներկայացվում են ՀՀ *վարչական դատարան*՝ **նախընտրական քարոզչությունը սկսվելու օրվանից մինչև քվեարկության հաջորդ օրը ներառյալ**: Այս դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել օրացուցային **3 օրվա ընթացքում** այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:

- Ընտրողների ցուցակներում տեղ գտած՝ դիմողի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու, ցուցակներում լրացումներ կատարելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները ներկայացվում են ՀՀ *վարչական դատարան*՝ **քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ**:

- Ընտրողների ցուցակներում տեղ գտած՝ դիմողի անձին վերաբերող անճշտությունները վերացնելու, դիմողին ցուցակում ընդգրկելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները ներկայացվում են *պատասխանողի գտնվելու վայրի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝* **ցանկացած ժամանակ:**
- Ազգային ժողովի ընտրությունների արդյունքով ընդունված որոշումների վիճարկման մասին դիմումները ներկայացվում են *ՀՀ սահմանադրական դատարան՝* **համապատասխան որոշման հրապարակման օրվանից հետո՝ 5-րդ օրը՝** մինչև ժամը 18.00-ն:

Որոշումներ, գործողություններ (անգործություն)	Ով կարող է դիմում ներկայացնել	Որ դեպքում/ լրացուցիչ պայման	Ուր կարող է ներկայացվել դիմումը	Ինչ ժամկետներում
Տեղամասային ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը)	Յուրաքանչյուր ոք	եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը	Համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով	Մինչև քվեարկության օրը՝ <u>օրացույցային 2 օրվա ընթացքում</u> այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին: Բողոքները կարող են ներկայացվել աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն, քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն, քվեարկության օրվա ընթացքում՝- ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն, քվեարկության հաջորդ օրը՝ - ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ - ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:
	Վստահված անձը	եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		
	Դիտորդը կամ այցելուն	եթե գտնում է, որ խախտվել է իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		
	Զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը	եթե գտնում է, որ խախտվել է իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		
	Ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը	եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		

Տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը)	Յուրաքանչյուր ոք	եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	<u>Օրացույցային **3** օրվա ընթացքում</u> այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին: Բողոքները կարող են ներկայացվել աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն, քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն, քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն, քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ը:
	Վստահված անձը	եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		
	Դիտորդը կամ այցելուն	եթե գտնում է, որ խախտվել է իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		
	Զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը	եթե գտնում է, որ խախտվել է իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		
	Ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը	եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		

Կենտրոնական ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը)	Յուրաքանչյուր ոք	եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը	Վարչական դատարան	Օրացույցային **3** օրվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին:
	Վստահված անձը	եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		
	Դիտորդը կամ այցելուն	եթե գտնում է, որ խախտվել է իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		
	Զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը	եթե գտնում է, որ խախտվել է իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		
	Ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը	եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը		

Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն անվավեր ճանաչելու դիմում	Միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, ըստ որոնց՝ գրանցման համար ներկայացված փաստաթղթերը կեղծված են	Միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով	ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն
Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելու դիմում	Միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝ 1) նա չունի ընտրվելու իրավունք. 2) նրա վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են.	Միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով	ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն

Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում	Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն	եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝ 1) նա չունի ընտրվելու իրավունք. 2) նրա վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են.	Միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով	ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն
		եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին		քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն
	Միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողովը	դատական ակտի հիման վրա՝ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով կամ 26-րդ հոդվածի 1-ին մասով կամ 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում	ՀՀ վարչական դատարան	մինչև քվեարկության օրը

Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը ուժը կորցրած ճանաչելու դիմում	Միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	եթե ներկայացվել է դիմում ինքնաբացարկի մասին	Միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով	քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն
		եթե՝ 1) կուսակցությունը լուծարվել է. 2) կուսակցության գործունեությունը կասեցվել կամ արգելվել է. 3) կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների թիվը նվազել է երկուսից. 4) կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացրած առնվազն 5 տարածքային ընտրական ցուցակներից յուրաքանչյուրում թեկնածուների թիվը նվազում է 2-ից:		ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն
	Միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողովը	Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով կամ 26-րդ հոդվածի 1-ին մասով կամ 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում	ՀՀ վարչական դատարան	մինչև քվեարկության օրը

Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու դիմում	Միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	եթե ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին	Միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով	քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն
	Միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով	Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքում	ՀՀ վարչական դատարան	մինչև քվեարկության օրը
Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցման վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը	Միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը	եթե առկա են գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքեր	ՀՀ վարչական դատարան	Օրացույցային **3** օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմորդն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու մասին դիմում	Ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	եթե գտնում է, որ առկա են համապատասխան հիմքեր	Տարածքային ընտրական հանձնաժողով	քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն
	Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն	եթե գտնում է, որ առկա են համապատասխան հիմքեր		
	Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն	եթե գտնում է, որ առկա են համապատասխան հիմքեր		
	Վստահված անձը	միայն այն դեպքում, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին		
	Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը	եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին		

Ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմում	Ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)	եթե գտնում է, որ առկա են համապատասխան հիմքեր	Ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով	ընտրության արդյունքներն ամփոփելու համար ընտրական օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն
	Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն			
Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում	Ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն	եթե գտնում են, որ առկա են համապատասխան հիմքեր	Տարածքային ընտրական հանձնաժողով	քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն
	Վստահված անձը			
	Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը			
	Քվեարկությանը չմասնակցած այն ընտրողը, որի տվյալների դիմաց, ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ			

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

Սույն հրատարակության մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի տեսակետի հետ:

The views, findings, interpretations and conclusions expressed herein are those of the authors and do not necessarily reflect the view of the OSCE.

Սույն հրատարակության մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի տեսակետի հետ:

The views, findings, interpretations and conclusions expressed herein are those of the authors and do not necessarily reflect the view of the OSCE.